ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 6, 1956 Биол. и сельхоз. науки

Պտղաբուծություն

Հ. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

ԳԵՏՆԱԵԼԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՐՏԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՄԵՐՁ ՑԱԾՐԱԳԻՐ ԳՈՏՈՒ ՀԱՄԱՐ

Սովետական Միության Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունն իրենց մի շարք որոշումներում բազմիցս նշել են խոշոր և արդյունաբերական քաղաքների շուրջը պտղա-հատապտղային կուլտուրաների զարգացման կարևորության մասին։ Բայց անհրաժեշտ է նշել, որ մեր երկրի հարավային շրջաններում հատապտուղների զարգացումն սկսվել է միայն վերջին տարիներում։

Բնակչության պահանջմունքները միբերքներով բավարարելու գործում մեծ նշանակություն ունեն նաև հատապտուղները, որոնց մեջ առաջին տեղերից մեկը գրավում է այգու խոշորապտուղ գետնաեղակը (Fragaria grandiflora Ehrh.).

Գետնաեղակի պտուղներն աչքի են ընկնում իրենց բարձր համային հատկություններով, շաքարների, թթուների, վիտամին C-ի ու հանքային աղերի զգալի պարունակությամբ։ Պտղա-հատապտղային կուլտուրաների մեջ գետնաեղակը համարվում է ամենաշուտ պտղաբերման մեջ մտնող և ամենավաղ հասունացող կուլտուրան։ Գետնաեղակի հիմնադրված նոր տընկարկները տնկման երկրորդ տարում արդեն մտնում են նորմալ պտղաբերման մեջ։

Հայկական ՍՍՌ ցածրադիր գոտու պայմաններում գետնաեղակի յուրաքանչյուր հեկտարից ստացվում է 4—6 տոննա միջին բերք։ Պտուղների հասունացումն սկսվում է մայիսի երկրորդ կեսից — հունիսի սկզբից և շարունակվում է մինչև հունիսի վերջերը, այսինքն այն ժամանակ, երբ Երևանի քաղաքամերձ գոտում ոչ մի պտղատու կուլտուրայի պտուղներ դեռևս հասունացած չեն լինում։

Անհրաժեշտ է նշել, որ, բացի առանձին տարածություններում մշակելուց, գետնաեղակը հնարավոր է մշակել նաև պտղատու այգիների միջշարքային տարածություններում։ Այդ հանգամանքի ապացույց են հանդիսանում Երևանի քաղաքամերձ գոտում գտնվող Նորքի, Կոնդի և Ավանի ձորի տնամերձ այգիները։ Այդ այգիներում գետնաեղակը մշակվում է բացառապես պտղատու ծառերի միջշարքային տարածություններում։

Երևանի քաղաքամերձ ցածրադիր գոտում, որը համարվում է Երևանի բնակչությանը թարմ պտուղներ և բանջարեղեն մատակարարելու հիմնական բազան, գետնաեղակը, որպես արդյունաբերական կուլտուրա, մինչև վերջին տարիները համարյա թե չէր մշակվում։ Դրա հիմնական պատճառը համարվում էր այն, որ ուսումնասիրված չէին գետնաեղակի սորտերը և ագրոտեխնիկան մեր պայմաններում։

Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի Պոդպրուժության ամբիոնը 1952 թվականի գարնանը հավաքելով Միության մեջ շատ տարածված գետնախնձորի սորտերի կոլեկցիա, սկսեց ստացիոնար ուսումնասիրություններ կատարել Երևանի քաղաքամերձ ցածրադիր գոտու պայմաններում։

1952—55 թթ. ընթացքում փորձնական աշխատանքները տարվել են Գյուղատնտեսական ինստիտուտի փորձակայանում, որը գտնվում է Երևանից 4 կմ հեռավորության վրա և համարվում է այդ գոտու տիպիկ հողամասերից մեկը։

Ուսումնասիրության ենթակա սորտերը եղել են հետևյալները՝

1. Արրիկոս
2. Դավիդովսկայա
3. Վիկտորիա
4. Ռոշչինսկայա
5. Միսովկա
6. Մագամ-Մուտո
7. Բելայա-անանասնայա
8. Լենինականի — 1
9. Լենինականի — 2
10. Իոսիֆ-Մագոմետ
11. Լյուցիդա-պերֆեկտա
12. Պրոլիֆիկ
13. Պոզդնայա-լեսոլոզոգալյա

Վերը նշված սորտերի բիոլոգիական առանձնահատկությունների և տնտեսական հատկանիշների ուղղությամբ կատարված սորտուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Երևանի քաղաքամերձ ցածրադիր գոտում միանգամայն հնարավոր է գետնախնձորի կուլտուրայի արտադրական մշակություն։ Սորտուսումնասիրությունների ժամանակ մեր կողմից առանձնացվել են գետնախնձորի 7 լավագույն սորտեր, որոնք աչքի են ընկել իրենց լավ աճեցողությամբ, Երևանի քաղաքամերձ ցածրադիր գոտու ուրույն հողա-կլիմայական պայմաններին լավ հարմարվողականությամբ, պտուղների բարձր որակով և բերքատվությամբ։ Ստորև բերվում է այդ սորտերի համառոտ բնութագիրը։

1. Ռոշչինսկայա. — Թուփը բարձր է, մինչև 36-40 սմ, լավ տերևապատված։ Տերևները խոշոր, բաց կանաչ գույնի, տակից քիչ մազմզուկապատված և թույլ փայլով։ Միջին տերևիկը ձվաձև կամ ձվա-ռոմբաձև։ Ատամնավորությունը խոշոր է և սուր, տերևակոթը երկար, բարակ և ծածկված կանգուն մազմզուկներով։ Ծաղկակիրները թփից մի քիչ բարձր են կամ նրան հավասար։

Ծաղկափթթությունը տարածուն է, ծաղկակոթները կարմրավուն, բարակ և երկար։ Ծաղիկները երկսեռ են, խոշոր, պսակաթերթիկները սպիտակ։ Երևանում ծաղկակիրների միջին թիվը 5—7 է։

Պտուղները խոշոր են, միջին քաշը 6 գրամ, իսկ առաջին պտուղների քաշը՝ 19—20 գրամ և ավելի։ Պտուղների ձևը կոնաձև կամ բութ-կոնաձև, լայն կողավորությամբ, իսկ բերքահավաքի վերջերին ավելի ուղիղ երկարավուն-կոնաձև, երբեմն պտղավզիկով։ Պտուղների գույնը բաց կարմիր է և փայլուն, սերմերը գեղին են և թույլ ընկղմված պտղամսի երեսին։ Պտղամիսը սպիտակ է, իսկ եզրերում վարդագույն, նուրբ, հյութալի, արոմատով։ Պտուղների քիմիական կազմությունը Երևանում լինում է հետևյալը. չոր նյութեր՝ մինչև 9,14%, ընդհանուր շաքարներ՝ 4,7—5,7%, թթուներ՝ 1,0—1,23%, վիտամին C-ն՝ 59,5—66,88 մգր%։ Դեկուստացիայի ժամանակ իր բոլոր հատկանիշներով ստացել է 4 գնահատական։

Մեր պայմաններում հանդես է բերում ուժեղ տնամերձություն և հաճախ երկրորդ անգամ ծաղկում և պտղաբերում է։ Բերքատվությունը բարձր է, մեկ թփից, միջին հաշվով, 222—251 գրամ։ Վաղահաս է, հասունանում է սկսած մայիսի կեսերից։ Պտուղները կարելի է օգտագործել ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված վիճակում։ Ձմռադիմացկուն է և առանց ձյան ծածկոցի Երևանում չի ցրտահարվում։

Նկ. 1. Իոշչինսկայա սորտը։

2. Վիկտորիա.— Երևանի քաղաքամերձ գոտու տնամերձ այգիներում ամենատարածված սորտն է։ Թուփն ունի միջին մեծություն, 30—35 սմ բարձրությամբ և լավ տերևապատվածությամբ, տերևները միջին մեծության են, փայլուն կանաչ գույնի, կնճռոտ և թավոտ։ Տերևները ձվաձև են, ատամները խոշոր և սուր։ Ծաղկակիրները միջին մեծության են, հաստ, կանաչ գույնի և ծածկված թփի մեջ, թփից ցածր։ Ծաղկակիրների միջին թիվը 5—6 է։ Ծաղկափթթությունը կոմպակտ է, ծաղկաթները կարճ, կարմրավուն երանգով, մազմզուկներով պատված։ Ծաղիկները երկսեռ են և ուղիղ ձևի, պտակաթերթիկները սպիտակ են և 5-ից ավելի, բաժակաթերթիկները բաց կանաչ գույնի։

Պտուղները ունեն միջին մեծություն, պտղարերման առաջին տարում միջին քաշը հասնում է 5.3 գրամի, իսկ երկրորդ տարում՝ 4,5 գրամի։ Մեծ պտուղների քաշը հասնում է 13—15 գրամի։ Պտուղները կլոր-երկարավուն և մուգ կարմիր գույնի։ Սերմերը դեղնա-կարմրավուն, ընկղմված պտղամսի երեսին։ Պտղամիսը կարմիր է և պինդ, լավ արտահայտված արոմատով։ Պտուղների մեջ չոր նյութերի պարունակությունը 10,47%,



Նկ. 2. Վիկտորիա տարբ.

ընդհանուր շաքարները՝ 6,1%, թթվությունը՝ 0,91%, վիտամին C-ն 64,59—67,26 մգ%։ Դեգուստացիայի ժամանակ ընդհանուր գնահատականը եղել է 4։ Մեկ թփի միջին բերքատվությունը կազմում է 159—189 գրամ։ Պտուղները հասունանում են մայիսի 20-ից սկսած։

Երևանում ցրտադիմացկուն է և չորադիմացկուն, բայց կարբոնատներով հարուստ հողերում թույլ կերպով հիվանդանում է քլորոզով։ Այս տարբ. իրեն շատ լավ է դրսևորել այգիների միջշարքային տարածություններում։

3. Միսուկա.— Մոսկվայի պտղա-հատապտղային կայանի աշխատակից Ա. Վ. Պետրովի կողմից ստացված տարբերից է, վերջին տարիներում լայն տարածում է ստացել Սովետական Միության մեջ։

Երևանի պայմաններում այս սորտի թուփն ունի 29—30 սմ բարձրություն, կոմպակտ և ուժեղ տերևապատվածություամբ։ Տերևները միջին մեծության են, թույլ կողավորությամբ, լայն ձվաձև, բաց-կանաչ գույնի, թույլ արծաթափայլ երանգով և թավոտ։

Ծաղկակիրները տերևների մակերևսին հավասար բարձրությամբ են, ծաղկափթթությունը ոչ շատ տարածուն, ծաղկակոթերն ունեն միջին երկարություն։ Ծաղկակիրների թիվը մեկ թփի վրա 7—9 հատ է։ Ծաղիկները



Նկ. 3. Միջակա սորտը

երկար են և խոշոր։ Գագաթները 5,5—6,8 գրամ միջին քաշով՝ պտղաբերման ամբողջ շրջանում։ Ամենախոշոր պտուղների քաշը 10—12 գրամ է։ Գագաթների ձևը՝ կլոր-ձվաձև, պտղավզիկը լավ արտահայտված, գույնը կարմիր, փայլուն, իսկ շատ հասունացած ժամանակ բալի նման մուգ կարմիր։ Սերմերը թույլ ընկղմված են պտղամսի մեջ։ Պտղամիսը կարմիր է, նուրբ արոմատով և քաղցր։ Չոր նյութերի պարունակությունը 9,94%, շաքարները՝ 8,1%, թթվությունը՝ 1,17%, վիտամին C-ն մինչև 61,95 մգ%։

Մեկ թփի միջին բերքատվությունը 185—211 գրամ է։ Ծրատպիմացկունությունը և չորատիմացկունությունը բարձր են, ապիտակ բծավորությամբ վարակվում է թույլ։ Գագաթները հասունանում են շուտ, մայիսի

15-ից սկսվում է առաջին բերքահավաքը։ Դեգուստացիայի ժամանակ պտուղները ստացել են 4 գնահատականներ։

4. Լենինականի —2.— Այս սորտը ստացվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պտղաբուծության ինստիտուտի լեռնային սեկտորում, Ս. Լ. Ադալյանի կողմից, Իոսիֆ-Մագոմետ և Արբիկոս սորտերի խաչաձևումից։

Թուփը բարձր է (30—35 սմ), կիսատարածող, միջին տերևապատվածությամբ (23—26 հատ)։

Տերևները խոշոր են, վառ-կանաչ գույնի, թույլ կնճռոտությամբ և խիտ թավոտությամբ։

Ծաղկակիրները թփից ցածր են։ Պտղաբերման առաջին տարում ծաղկակիրների թիվը լինում է 2—4 հատ, իսկ երկրորդ տարում՝ 2—5 հատ։ Ծաղկափթթությունը տարածուն է, որը բաժանվում է 4 ճյուղավորությունների, ամեն մի ճյուղավորությունում 4—6 ծաղկով։

Ծաղիկները միջին մեծության են, երկսեռ, պսակաթերթիկները սպիտակ, կլորավուն։ Պտուղները միջին մեծության՝ 5,6—7,0 գրամ քաշով, իսկ խոշոր պտուղները՝ մինչև 12 գրամ, կլոր-կոնաձև, գագիկով, երբեմն անկանոն ձևի և թույլ կողավորությամբ։

Պտղի գույնը կարմիր է, փայլուն մակերեսով։ Սերմերը վառ գունավորությամբ և խորն ընկղմված պտղամսի երեսին։ Պտղամիսը սպիտակ և նուրբ։ Պտղի համը գուրեկան է, թթվաքաղցր, չոր նյութերը կազմում են 9,47%, ընդհանուր շաքարները՝ 5,6—6,9%, ավելի բարձր քան Լենինականի պայմաններում, թթվությունը՝ 1,19%, վիտամին C-ն մինչև 51,57 մգ%։ Դեգուստացիայի ժամանակ իր բոլոր հատկանիշներով ստացել է 4 գնահատական։

Մեկ թփի միջին բերքատվությունը 126,0 գրամ պտղաբերման առաջին տարում և 142 գրամ՝ երկրորդ տարում։ Հասունացումը սկսվում է մայիսի վերջերից և շարունակվում է մինչև հունիսի 15-ը։

Ցրտադիմացկուն և չորադիմացկուն է, հուլիս-օգոստոս ամիսների բարձր ջերմաստիճանից Երևանի պայմաններում չի տուժում, որով ավելի է բարձրանում այս սորտի արժեքը։

5. Արբիկոս.— ՍՍՌՄ-ում շատ տարածված սորտերից է, հանդիպել ենք նաև Երևանի մատակայքի տնամերձ այգիներում։

Թուփն ունի 30—40 սմ բարձրություն, խիտ տերևապատված է, կոմպակտ ու կանգուն։ Տերևները խոշոր են, մուգ կանաչ գույնի, կնճռոտ, փայլուն, թավոտ, ձվաձև, ուժեղ կողավորությամբ։

Ծաղկակիրները մինչև 35 սմ երկարությամբ են, թփին հավասար բարձրությամբ և թավոտ։ Ծաղկակիրների միջին թիվը լինում է 5—6։ Ծաղկափթթությունը տարածուն է, ծաղիկները երկսեռ են, միջին մեծությամբ, պսակաթերթիկները սպիտակ։ Պտուղները խոշոր են, 6—9 գրամ միջին քաշով, իսկ խոշոր պտուղները՝ 16—20 գրամ և ավելի։

Պտուղը վառ կարմիր է, ուղիղ, տափակ կլորավուն։ Սերմերը գեղնակարմիր են և թույլ ընկղմված պտղամսի երեսին։ Պտուղները շատ համեղ են, ուժեղ արոմատով, դեգուստացիայի ժամանակ ստացել է 4 գնահատական։

Պտուղների քիմիական կազմությունը Երևանի պայմաններում հետևյալն է՝ չոր նյութեր՝ 9,27%, ընդհանուր շաքարներ՝ 6,2%, թթվությունը՝ 0,99%, վիտամին C-ն մինչև 54,91 մգր %։ Մեկ թփի միջին բերքատվությունը 202—211 գրամ է։ Ըստ պտղի հասունացման ժամկետի գրավում է միջին տեղը։ Հասունանում է Միսովկա սորտից մեկ շաբաթ հետո, համար-



Նկ. 4. Արբիկոս սորտը

վում է լավագույն գնահատային սորտերից մեկը։ Երևանում այս սորտը ցրտադիմացկուն և չորադիմացկուն է, շատ լավ աճում է այգիների միջշարքային տարածություններում։

6. Պոզդնայա-լեռպոլդպգալյա.— Շատ տարածված սորտերից է։ Թուփն ունի ուժեղ աճեցողություն, հզոր է և քիչ տարածված։ Տերևապատվածությունը լավ է, մեկ թփի վրա՝ 29—41 տերև։ Տերևները խոշոր են, կանաչ գույնի, փայլուն, պինդ, մազմզուկներից զուրկ և թեթև կնճռոտությամբ։

Ծաղկակիրներն ունեն թփին հավասար բարձրություն, միջին թիվը մեկ թփի վրա 5—6 է։ Ծաղիկները միասեռ են (իդեական), միջին մեծության, պսակաթերթիկները՝ սպիտակ, 5-ից ավելի (6—7 հատ)։ Պտուղները խոշոր են՝ 6,8—8,4 գրամ միջին քաշով, իսկ խոշոր պտուղները՝ 17—19 գրամ։ Պտուղները բութ-կոնաձև են և թույլ կողավորությամբ, գույնը՝

մուգ-կարմիր և փայլուն, սերմերը նույնպես կարմիր են և թույլ ընկըղմված պտղամսի երևին։ Պտղամիսը բաց-կարմիր գունի է, պինդ, դուրեկան թթվությամբ։

Չոր նյութերի պարունակությունը պտուղներում կազմում է մինչև 9,47%, ընդհանուր շաքարները՝ 5,6%, թթվությունը՝ 1,54%, վիտամին-

Նկ. 5. Ոգդնայա-լեոպոլդովայա սորտը

C-ն մինչև 54, 91 մգր%։ Բերքատվությունը բարձր է. մեկ թփից, միջին հաշվով, ստացվում է 235—261 գրամ։

Աշքի է ընկնում իր ուշահասությամբ, Երևանում հասունանում է հունիսի 1-ից և շարունակում է պտղաբերել մինչև հունիսի 20-ը։ Ցրտադիմացկուն և չորադիմացկուն է։ Այս սորտի լավագույն փոշոտիչները համարվում են Իռոշչինսկայա, Աբրիկոս և Մադամ-Մուտո սորտերը։

7. Պրոլիֆիկ.— Այս սորտը մեր Միության մեջ շատ տարածված է Հյուսիսային Կովկասում և շատ քիչ է հանդիպում Ենացած շրջաններում։ Թուփը մեր կողմից փորձարկված բոլոր սորտերից համեմատաբար խոշոր է, ուժեղ աճեցողությամբ, մինչև 40 սմ բարձրությամբ, խիտ տերևապատվածությամբ։

Տերևները խոշոր են, կլորավուն, եզրերը կտրտված, սուր ատամնավորությամբ և կնճռոտ։ Ծաղկակիրները հաստ, ուղիղ կանգուն, տերևներին հավասար կամ նրանցից բարձր։ Ծաղկակիրների միջին թիվը Երևանում 6—7 է մեկ թփի վրա։ Ծաղիկները խոշոր են, սպիտակ, միասեռ։

Պտուղները խոշոր են կամ միջին մեծության։ Առաջին պտուղներից յուրաքանչյուրի քաշը 13—20 գրամ է, հետագա պտուղներից յուրաքանչյուրի քաշը ամբողջ պտղաբերման շրջանում 6,5—9,0 գրամ է։



Նկ. 6. Գրոլիֆիկ սորտը

Պտուղները լինում են տարբեր ձևերի՝ լայն-կոնաձև, լայն-կողավոր, գույնը մուգ կարմիր և փայլուն։

Պտղամիսը պինդ է, թթվաքաղցր համով, արոմատը լավ արտահայտված. սերմերը կարմիր գույնի են և թույլ ընկղմված պտղամսի երեսին։ Պտղամիսը սպիտակ է, թույլ կարմրությամբ։

Պտուղների մեջ չոր նյութերի պարունակությունը մինչև 9,67%, ընդհանուր շաքարները՝ 7,2%, թթվությունը 0,64—1,11%, վիտամին C-ն մինչև 62,83 մգ%։ Ռեգուստացիայի ժամանակ իր բոլոր հատկանիշներով ստացել է 4 գնահատական։

Շատ բերքատու սորտ է, միջին բերքատվությունը մեկ թփից եղել է 224—250 գրամ։

Ուշանաս է և առաջնակարգ տեղ պետք է դրավի Երևանի քաղաքամերձ ցածրադիր գոտու ստանդարտ սորտիմենտում։

Հողի նկատմամբ պահանջկոտ չէ և լավ կարող է աճել նույնիսկ ծանր կավային, կարբոնատներով հարուստ հողերում։ Ցրտադիմացկուն ու չորադիմացկուն է և քլորոզով չի վարակվում։

Լավագույն փոշոտիչներն են՝ Վիկտորիա, Ռոշչինսկայա, Գոզդնայա-լեոպոլդսգալյա սորտերը։

Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի
Պտղաբուծության ամբիոն։

Ստացվել է 19 XII 1955 թ.։

О. Н. ШАГИНЯН

ЛУЧШИЕ СОРТА ЗЕМЛЯНИКИ ДЛЯ ПРИГОРОДНОЙ НИЗМЕННОЙ ЗОНЫ ЕРЕВАНА

Резюме

Проведенные работы по сортоизучению земляники в условиях пригородной низменной зоны Еревана показали, что вполне возможно широкое распространение этой культуры.

В процессе сортоизучения нами выделен ряд сортов земляники, как наиболее урожайный и приспособленный к специфическим почвенно-климатическим условиям этой зоны; для широкой промышленной культуры рекомендуются следующие сорта:

1. Рощинская
2. Виктория
3. Мысовка
4. Ленинаканская-2

раннего созревания

5. Абрикос — среднего созревания

6. Пролифик
7. Поздняя - леопольдсгалья

позднего созревания

Отмеченные сорта осенью 1954 г. внедрены в производство (совхоз им. К. Е. Ворошилова Армконсервтреста).